Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.045

On the Issue of Dating the Cathedral Church of Surb Astvatsatsin in Avan

Avetik Ghazaryan
https://orcid.org/0009-0005-0216-5858
PhD Student at the Institute of Archaeology and Ethnography of the NAS of the RA, lecturer at Yerevan State University
avetik.ghazaryan@ysu.am

Keywords: monuments, residence of the Catholicos, Armenian Chalcedonian Anti-See Catholicosate, church complex, Cathedral Church of Surb Astvatsatsin, Hovhan Bagarantsi.

This study, aimed at dating the Cathedral Church of Surb Astvatsatsin in Avan, is based on a new comparative analysis, re-evaluation and re-substantiation of studies and historical facts on this topic using historical-ecclesiastical comparative, critical, analytical and descriptive methodology. As a result, a scientific analysis is put forward in the context of dating the Church of Surb Astvatsatsin. The results of the study of the problem under discussion are important for conducting multifaceted and interdisciplinary research.

Medieval literary sources provide valuable information about the complex of the church of Surb Astvatsatsin, that is, the Cathedral Church and the residence of the Catholicos, but do not specify the date of construction. The main issues around which scientific discussions were conducted were the history of the monument, its dating, architectural composition, as well as lapidary inscriptions, which are important for the study of various historical and cultural issues not only in Armenia, but also in the region. Historical facts and medieval literary information are of great importance for the scientific study of the dating of the Surb Astvatsatsin Church, the comparative results of which provide an opportunity for a new scientific discussion on the issue of the discussed object. Thus, a comparative analysis of literary and historical data allows the Cathedral Church of Surb Astvatsatsin in Avan to be dated to the end of the 6th century, taking 591 as the beginning of construction and 597 as the completion. Accordingly, the data we provide also complement the point of view proposed by T. Toramanyan and allow for its re-substantiation.

Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման հարցի շուրջ

Ավետիք Ղազարյան

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 45-54

Received: 15.06.2025
Revised: 11.08.2025
Accepted: 19.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

On the Issue of Dating the Cathedral Church of Surb Astvatsatsin in Avan

Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման հարցի շուրջ

ՀՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, ԵՊՀ դասախոս

Հիմնաբառեր՝ հուշարձաններ, կաթողիկոսարան, Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսություն, եկեղեցական համալիր, Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցի, թվագրում, Հովհան Բագարանցի։

Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրմանն ուղղված սույն հետազոտության հիմքում ընկած են խնդրո առարկա հարցի շուրջ ծավալված ուսումնասիրությունների և պատմական փաստերի նորովի համադրումը, վերարժևորումն ու վերահիմնավորումները պատմաեկեղեցական համադրական, քննական, վերլուծողական ու նկարագրական մեթոդաբանությամբ։ Առաջադրվում են Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման համատեքստում գիտական վերլուծություններ։ Քննվող հարցի հետազոտական արդյունքները կարևորություն են ներկայացնում բազմակողմանի ու միջգիտակարգային քննության իրականացման համար։

Այսպիսով՝ հոդվածի առանցքը Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման գիտական վերլուծությունն է, որին առնչակից քննարկվող հարցերի շրջանակում անդրադարձ է կատարվում նաև ժամանակաշրջանի պատմաեկեղեցական կարևոր իրողությունների բնութագրմանը։

Մատենագրական աղբյուրները, հաղորդելով Ս. Աստվածածին եկեղեցական համալիրի, իմա՝ Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու ու կաթողիկոսարանի կառուցմանն առնչվող արժեքավոր տեղեկություններ, այդուհանդերձ չեն հստակեցնում կառուցման թվականը։ Հիմնախնդիրները, որոնց շուրջ ծավալվել են գիտական բազմակարծիք քննարկումներ, եղել են հուշարձանի պատմությունը, թվագրումը, ճարտարապետական հորինվածքը, որմնաշար վիմական արձանագրությունները, որոնք նշանակալի կարևորություն են ներկայացնում ոչ միայն հայոց, այլև տարածաշրջանի պատմամշակութային բազմապիսի հարցերի հետազոտման համար։ Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման գիտական քննության համար էական նշանակություն ունեն պատմական փաստերն ու մատենագրական տեղեկությունները, որոնց ընձեռած տվյալների համեմատական ու համադրական արդյունքները հնարավորություն են ընձեռում նոր լույսի ներքո դիտարկելու խնդրո առարկան։ Այսպիսով՝ մատենագրական և պատմական տվյալների համադրական վերլուծությունը թույլ է տալիս Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին թվագրել VI դարավերջով՝ ընդունելով կառուցման մեկնարկի համար 591 թվականը, իսկ ավարտի՝ 597 թվականը։ Ըստ այդմ՝ մեր կողմից բերված տվյալները գալիս են նաև համալրելու Թ. Թորամանյանի առաջադրած տեսակետը և վերահիմնավորումներ կատարելու։

К вопросу о датировке Кафедральной церкви Сурб Аствацацин в Аване

Аветик Казарян

Соискатель степени кандидата исторических наук при Институте археологии и этнографии НАС РА, преподаватель ЕГУ

Ключевые слова: памятники, резиденция католикоса, Армянский халкидонитский антипрестольный католикосат, церковный комплекс, Кафедральная церковь Сурб Аствацацин, Ован Багаранци.

В основе данного исследования, направленного на датировку Кафедральной церкви Сурб Аствацацин, которая находится в Аване, лежат новый сравнительный анализ, переоценка и переобоснование существующих исследований и исторических фактов. В работе использованы историко-церковная, сравнительная, критическая, аналитическая и описательная методологии. В результате представлен научный анализ в контексте датировки церкви Сурб Аствацацин. Результаты исследования важны для проведения многогранных и междисциплинарных изысканий.

Средневековые литературные источники сообщают ценные сведения о комплексе Сурб Аствацацин (Кафедральной церкви и резиденции католикоса), однако не уточняют дату строительства. Основными вопросами научных дискуссий остаются история памятника, его датировка, архитектурная композиция и лапидарные надписи, имеющие важное значение для изучения историко-культурных проблем Армении и региона. Исторические факты и сведения средневековой литературы имеют существенное значение для научной датировки храма; их сопоставление открывает возможность для новой дискуссии. Таким образом, сравнительный анализ письменных и исторических данных позволяет датировать Кафедральную церковь Сурб Аствацацин в Аване концом VI века (591 г. — начало строительства, 597 г. — завершение). Представленные данные дополняют и научно обосновывают точку зрения, предложенную ранее Т. Тораманяном.

* * *

Ներածություն: Հայաստանի միջնադարյան հուշարձանների շարքում առանձնակի կարևորություն են ներկայացնում պատմական Կոտայք գավառի Ավան գյուղի կամ գյուղաքաղաքի եկեղեցաճարտարապետական միջնադարյան կառույցները: Այդ շարքում առանցքային տեղ է զբաղեցնում Ս. Աստվածածին եկեղեցական համալիրը, որը ներկայացնում են Կաթողիկե Ս.Աստվածածին եկեղեցին (հայտնի նաև նշված անուններով՝ Կաթողիկե, Ծիրանավոր, Կաթուղիկե Հովհաննաշեն) և կաթողիկոսարանը:

Պատմության բազմադարյա ուղի անցած և 1675 թ. երկրաշարժի արդյունքում խոնարհված սույն հուշարձանները Երևանի Ավան վարչական շրջանի հյուսիսարևելյան հատվածում այսօր ներկայանում են XX դարում մի քանի հանգրվանով իրականացված պետապահպանական աշխատանքների արդյունքներով:

Պատմությամբ ագուցված՝ եկեղեցաճարտարապետական սույն կառույցները՝ որպես հուշարձանախումբ, իրենց առանձնահատկություններով հանդերձ, կազմում են այն առանցքը, որի շուրջ ամբողջանում է Ավանի միջնադարյան պատմամշակութային ժառանգությունը:

Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին, սկսած XIX դարի կեսից, առանձին հարցերի շուրջ հետազոտության առարկա է դարձել, իսկ XX դարից սկսած՝ Ավանի միջնադարյան հուշարձանների շարքում ուսումնասիրողների համալիր հետազոտման կիզակետում է՝

բազմագիտակարգային համապարփակ ընդգրկմամբ: Հիմնախնդիրները, որոնց շուրջ ծավալվել են գիտական բազմակարծիք քննարկումներ, եղել են հուշարձանի պատմությունը, թվագրումը, ճարտարապետական հորինվածքը, որմնաշար վիմական արձանագրությունները, որոնք նշանակալի կարևորություն են ներկայացնում ոչ միայն հայոց, այլև տարածաշրջանի պատմամշակութային բազմապիսի հարցերի հետազոտման համար:

Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու գիտական ուսումնասիրման խթան են հանդիսացել մատենագրական տեղեկություններն ու ճարտարապետահատակագծային հորինվածքը, որոնցից յուրաքանչյուրը բացահայտում է հուշարձանի թե՛ պատմական, թե՛ ճարտարապետական աննախադեպ արժեքը: Խնդրո առարկա հարցի հետազոտական արդյունքները կարևորություն են ներկայացնում բազմակողմանի, միջգիտակարգային քննության իրականացման համար, ինչպես նաև բազմագիտակարգային ընդգրկումն ու արդյունքների առանձնակի կարևորությունն ինքնին պայմանավորում են թեմայի արդիականությունը:

Հուշարձանի պատմամշակութային արժեքի ու գիտական նշանակության դիտակետից առանձնակի կարևորություն է ներկայացնում թվագրումը, որը և դարձել է սույն հետազոտության առանցքը: Բացի դրանից՝ քննվող հարցերի շրջանակում անդրադարձ է կատարվում պատմաեկեղեցական կարևոր իրողությունների վերլուծությանը, որը ևս կարևոր է ժամանակաշրջանի իրադարձությունների բնութագրման համատեքստում:

Սույն հետազոտության հիմքում ընկած է պատմաեկեղեցական համադրական, քննական, վերլուծողական ու նկարագրական մեթոդաբանությունը:

Հոդվածի նպատակն է ներկայացնել խնդրո առարկա հարցի շուրջ ծավալված ուսումնասիրությունները և պատմական փաստերի նորովի համադրմամբ, վերարժևորմամբ ու վերահիմնավորումներով առաջադրել Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման համատեքստում գիտական վերլուծություններ:

Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցական համալիրի հուշարձանների թվագրման ուսումնասիրությունների շուրջ: Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին ու նրան հյուսիսային հատվածում հարակից Կաթողիկոսարանը չունեն կառուցման թվականի մասին գրավոր հստակ վկայություն: Թվագրման համար հիմք են ծառայում մատենագրական վկայություններն ու ճարատարապետահորինվածքային, շինարարական տվյալների վերլուծական արդյունքները, որոնք հետազոտողների աշխատանքներում հանդես են գալիս թե՛ առանձնակի և թե՛ համադրված:

Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության և Ավանի Կաթողիկե Ս.Աստվածածին եկեղեցու վերաբերյալ հայ մատենագրական ամենավաղ տեղեկությունները հաղորդում են Հովհան Մայրագոմեցին (VI-VII դդ.) ու Սեբեոսը (VI-VII դդ.):

Հովհան Մայրագոմեցին «Դաւթայ Մեծ Կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց եւ նկարագրութեանց՝ հարցուած ի Յովհաննայ Մայրագոմեցւոյ» թղթում հաղորդում է. «Ապա ընդ երկուանալ հայրապետութեանն Հայոց էր մեծ մարտ ընդ Մովսէս և ընդ Թէոդորոս՝ Կարնոյ եպիսկոպոս, զոր Փիլիսոփայապետն կոչէին: Սոքա եւ ուղղափառքս աղարտէին զՀոռոմոց ամենայն կրաւնսն: Եւ առնէր ժողով Մովսէս իւր կողմանն վարդապետացն եւ հրամայէր ամենեւին չհաղորդել ընդ Հոռոմսն հնազանդեալսն Քաղկեդոնական ժողովոյն չարի, զի գործք նոցա

ստութեամբ են. մի՛ գիրս, մի պատկերս, մի՛ նշխարս ի նոցանէ ընդունել։ Յայնժամ Թէոդորոս ետ հրաման ժողովել եպիսկոպոսացն Հայոց, որ ի նորայն կողմանն՝ ի Կարնոյ քաղաք, եւ ասէ. «Պարտ է մեզ առնել կաթողիկոս»։ Եւ ածին զՅովհան ոմն սիւնական, ձեռնադրեցին եւ հնազանդեցան քաղկեդոնական կրաւնիցն» [Յովհան Մայրագոմեցի 2005, 356]։

Պատմական նույն իրադարձության մասին Սեբեոսը գրում է. «Հրաման ելանէ դարձյալ ի կայսերէն (իմա՝ Մորիկ կայսրի (582-602 թթ.) կողմից) վերստին այլ՝ քարոզել զժողովն Քաղկեդոնի յամայն եկեղեցիս Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւր։ …Եվ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւք։ Բաժանեցաւ ապա և աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյ Մովսէս, և միւսոյն՝ Յովհան։ Մովսէս ի Պարսից կողմանէ, և Յովհանն՝ Յունաց» [Սեբեոս 2005, 100]։

«Իսկ յամի քսաներորդի առաջներորդի արքային Խոսրովայ հրաման ետ նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ և տանել բնակեցուցանել յԱհմատեան (իմա՝ Համադան) շահաստանի. ընդ նոսին ըմբռնեալ և երանելի ծերունի կաթուղիկոսն Յովհան ի գերութիւն վարեցաւ հանդերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն։ Եվ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գիւղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց» [Սեբեոս 2005, 146]։

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ հաջորդիվ տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին (IX-X դդ.). «Ըստ հրամանի կայսերն Մօրկայ զՅոհան ոմն ի գաւառէ Կոգայ ի Բագարան գեղջէ կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա ի քաղաքագիւղն Աւան, ուր և շինեացն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ և շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ» [Հովհաննես Դրասխանակերտցի, 1996, 74]։

«Իսկ Աշոտ ոմն հրամանաւ Խոսրովայ հասեալ ի Հայս և դիմեալ ի վերայ՝ խորտակէր զզօրսն Յունաց… և ինքն կալեալ զգործ պատերազմի ընդ Կարնայ քաղաքի՝ առնոյր զնա։ Եւ յետ երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին յԱհմատան փոխէ։ Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յոհան կայր ի փախստականութեան ի նմա՝ ընդ նոսին և նա ևս ըմբռնեալ՝ վարեալ ի գերութիւն և անդէն վախճանեալ՝ բերաւ ի գիւղն Աւան, որ եդաւ մերձ յեկեղեցին, զոր իւր իսկ էր շինեալ. կալեալ զաթոռ հայրապետութեան ամս **իզ** (իմա՝ 26)» [Հովհաննես Դրասխանակերտցի, 1996, 76]։

Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության, Ավանի նստավայրի և միակ կաթողիկոս Հովհան Բագարանցու վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նաև հայ մատենագիրներից Սամվել Անեցին (XII դ.) [Սամուէլ Անեցի 2014, 77, Սամուէլ Անեցի և շարունակողներ 2014, 145], Կիրակոս Գանձակեցին (XIII դ.) [Կիրակոս Գանձակեցի 1961, 51], Ստեփանոս Օրբելյանը (XIII դ.) [Ստեփանոս Օրբելեան 1910, 90-91] և ուրիշներ։

Մատենագիրների հաղորդած տեղեկությունները հավաստում են պատմական Կոտայք գավառի Ավան բնակավայրում Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության հաստատումը, հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցու գահակալումը և «կայանի» (իմա՝ բնակավայր կամ նստավայր)՝ կաթողիկոսարանի կառուցումը[1]։ Պատմության մեջ եզակի այս ձեռնարկը կյանքի է կոչում Բյուզանդիայի Մորիկ կայսրը 591 թ. բյուզանդա-պարսկական

[1] Բացառություն է կազմում Ստեփանոս Օրբելյանի հաղորդումը, որով Ավանի փոխարեն նշվում է «Արամօնք գիւղը» ներկայիս ՀՀ Կոտայքի մարզի Արամուս գյուղը [Ստեփանոս Օրբելեան 1910, 91]։

համաձայնագրով Հայաստանի երկրորդ բաժանումից հետո: Հակաթոռ կաթողիկոսության առաջին ու միակ հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցին, վերսկսված պարսկա-բյուզանդական ռազմական առճակատման պայմաններում հարկադիր լքելով Ավանը, տարագրվում է նախ Կարին, ապա այդտեղից աքսորվում Համադան: Նրա մահվամբ պայմանավորված՝ 611 թ. դադարում է Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության գոյությունը [Ղաֆադարյան Կ. 1968, 84, 85; Մարության Տ. 1976, 5-6; Ղազարյան Ա. 2018, 63-65]:

Մատենագրական աղբյուրները, հաղորդելով Ս. Աստվածածին եկեղեցական համալիրի, իմա՝ Ս. Աստվածածին եկեղեցու ու կաթողիկոսարանի կառուցմանն առնչվող արժեքավոր տեղեկություններ, այդուհանդերձ չեն հստակեցնում կառուցման թվականը: Վերլուծելով ճարտարապետական-շինարարական հատկանիշները և պատմագրական տվյալները՝ հուշարձանի խնդրո առարկա կարևոր հարցին անդրադարձել են մի շարք հետազոտողներ, ինչպես, օրինակ, Թ. Թորամանյանը, Ա. Երեմյանը, Կ. Ղաֆադարյանը, Տ. Մարությանը և ուրիշներ [Токарский Н. 1961, 59; Якобсон А. 1950, 19]:

Թ. Թորամանյանը, քանիցս հայտնելով իր համոզմունքը Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու՝ VI դարի պատկանելության վերաբերյալ, կատարում է հուշարձանի հստակ թվագրում: Հիմք ընդունելով Ավանում հակաթոռ կաթողիկոսության հաստատումը՝ նա գրում է. «Շինողն է Հովհան Բագարանցի հակաթոռ կաթողիկոսը (590-611): Այս եկեղեցին շիներ է իբրև կաթողիկոսական եկեղեցի, գահակալության սկիզբին՝ VI դարու վերջին» [Թորամանյան Թ. 2013, 309]:

Ա. Երեմյանը Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման թվագրման հարցում ելակետային է համարում մի շարք մատենագրական աղբյուրներում Հովհան Բագարանցու աթոռակալման համար հիշատակված 26 տարիները [Еремян А. 1969, 52-53]: Հետազոտողը հակաթոռ կաթողիկոսի աթոռակալման ավարտն ընդունելով 610 թ.՝ հանում է 26 տարիների տևողությունը և ստանում է 584 թ.: Այնուհետ, հիմք ընդունելով Ստեփանոս Օրբելյանի հաղորդումը, ըստ որի՝ «Յովհան ոմն ի Թէոդուպօլիս եղև կաթողիկոս…» [Ստեփանոս Օրբելեան 1910, 90], Ա.Երեմյանը եզրակացնում է, որ Հովհան Բագարանցին, 584 թվականից սկսած՝ աթոռակալելով Թեոդոպոլիսում, այն է՝ Կարինում, հաստատվում է Ավանում 588/590 թթ.՝ ձեռնարկելով աթոռանիստ եկեղեցու կառուցումը: Հետևելով Հռիփսիմեի տաճարի շինարարության տևողության (618-625 թթ.) օրինակին՝ նա Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ավարտը համարում է 595/597 թթ. [Еремян А. 1969, 55]:

Կ. Ղաֆադարյանի տեսակետի համաձայն՝ Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Հովհան Բագարանցու կողմից մինչև նրա կաթողիկոսանալը՝ նույն տեղում նրա վանահայրության օրոք, «այլապես,– հիմնավորում է նա,– պետք է ենթադրենք, որ այդ Հովհան հակաթոռն առանց եկեղեցու է սկսել իր գործունեությունը Ավանում»: Ըստ այդմ՝ հուշարձանի կառուցումը նա թվագրում է VI դարի երկրորդ կեսով, սակայն ավելի վաղ, քան հակաթոռ կաթողիկոսության հաստատումը Ավանում [Ղաֆադարյան Կ. 1968, 90]:

Տ. Մարությանի կողմից հուշարձանի թվագրումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ինչպես մատենագրական տվյալները, այնպես էլ ճարտարապետական–շինարարական հատկանիշների

վերլուծության արդյունքները: Ըստ նրա՝ Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է շատ ավելի վաղ, քան այստեղ հաստատվել է հակաթոռ կաթողիկոսությունը: Տվյալ եզրահանգման հիմք է հանդիսանում հուշարձանի հյուսիսային ճակատի՝ կառուցումից ակնհայտորեն հետո ստեղծված մուտքի բացվածքը, որը, ինչպես կարծում է նա, արդյունք է Հովհան Բագարանցու կողմից կառուցված վեհարանի հետ հաղորդակցման անհրաժեշտության: Այսպես՝ հեղինակը Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման շուրջ այն տեսակետն է առաջադրում, որ 582/584 թթ. արդեն եղել է ավարտված, որի հյուսիսային կողմում էլ 591-592 թթ.իրականացվել է կաթողիկոսարանի կառուցումը [Մարության Տ.1980, 73-76]:

Միով բանիվ՝ Ս. Աստվածածին եկեղեցական համալիրի թվագրման գիտական արդյունքների համաձայն՝ արձանագրում ենք հետազոտողների համակարծությունը կաթողիկոսարանի թվագրման հարցում, այն է՝ հուշարձանի կառուցումը մեկնարկել է Ավանում Հայ քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության հաստատման հետ միաժամանակ՝ հավանաբար, տևելով շուրջ 2 տարի. ավարտվել է 592 թ.: Ս.Աստվածածին եկեղեցու թվագրումը, գիտական տարակարծությամբ հանդերձ, հիմնականում վերաբերում է VI դարի երկրորդ կեսին:

Ավանի Կաթուղիկե Ս. Աստվածածին եկեղեցուն առնչակից պատմամատենագրական տվյալների վերլուծություն: Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման գիտական քննության համար էական նշանակություն ունեն պատմական փաստերն ու մատենագրական տեղեկությունները, որոնց ընձեռած տվյալների համեմատական և համադրական արդյունքները հնարավորություն են ընձեռում նոր լույսի ներքո դիտարկելու խնդրո առարկան:

Սեբեոսի ու Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած տեղեկությունները, որոնք պահպանվում են նաև հաջորդող հայ մատենագիրների վկայություններում, հնարավորություն են ընձեռում արձանագրելու Հայ քակեդոնադավան կաթողիկոսությանն առնչվող մի շարք հանգամանքներ: Դրանք առանձնակի կարևորություն են ներկայացնում Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրմանն առնչվող հարցերը գիտական քննության ենթարկելու տեսանկյունից: Հարկ է առանձնացնել ներքոհիշյալ դիտարկումները.

ա. Մորիկ կայսեր (582-602 թթ.) կողմից աննախադեպ նախաձեռնությունը՝ Ավանում Հայ քաղկեդոնավան հակաթոռ կաթողիկոսություն հաստատելու՝ Հովհան Բագարանցու գլխավորությամբ, հաջորդում է Հայ եկեղեցուն քաղկեդոնադավանություն պարտադրելու կայսեր տապալված ջանքերին: Ընդ որում՝ Մորիկ կայսրն այդ ջանքերը գործադրում է 591 թվականի՝ Բյուզանդական կայսրության սահմանների ընդարձակումից հետո: Այս հանգամանքի հիմնավորման տեսանկյունից, վերոնշյալ մատենագրական տեղեկություններից բացի՝ առանձնակի կարևորվում է նաև «Narratio de rebus Armeniae» հունարեն թարգմանությամբ մեզ հասած հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուրը՝ գրված շուրջ 700 թ., որի հայերեն բնօրինակը չի պահպանվել [Բարթիկյան Հ. 1962, 457]:

Խնդրո առարկայի շրջանակում սկզբնաղբյուրին անդրադարձել են Ա. Երեմյանը [Еремян А. 1969, 54], Կ. Ղաֆադարյանը [Ղաֆադարյան Կ. 1975, 56-58]: Բնագրում քաղկեդոնադավանության ջատագովման դիրքերից ներկայացվում են հայ-բյուզանդական միջեկեղեցական հարաբերությունները 325 թվականից մինչև 700 թվականը: Խնդրո առարկա հարցի առնչությամբ սկզբնաղբյուրում կարևորվում է հետևյալ հաղորդումը. «Կայսրը նամակներով հրաման ուղարկեց, որպեսզի Հայոց բոլոր եպիսկոպոսները և Մովսես կաթողիկոսը ուշադրություն չդարձնեն

հրամանին ասելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուտի փռան հացը և չեմ խմի ջրախառն տաք գինի»: Վասպուրական աշխարհի եպիսկոպոսները և նրանք, ովքեր գտնվում էին Պարսից տիրապետության տակ, նմանապես չցանկացան գնալ: Իսկ Տարոնի եպիսկոպոսներն ու ովքեր գտնվում էին հռոմայեցիների տիրապետության տակ, գնացին Կոստանդնուպոլիս: Երկար գնալուց հետո, նրանք հոռոմներից համոզվեցին և ստորագրեցին ու երդմամբ համամիտ դարձան նրանց: Երբ նրանք վերադարձան Հայաստան, Մովսեսը նրանց չընդունեց և Պարսկահայաստանի մյուս եպիսկոպոսները: Նրանք իրենց կաթողիկոս ձեռնադրեցին Հովհաննեսին՝ Կոգովիտի Բագարան գյուղից» [Բարթիկյան Հ. 1962, 467] :

բ. Հովհան Բագարանցին՝ արդեն որպես նշանակված կաթողիկոս, նոր միայն «բնակեցվում», այն է՝ տեղափոխվում և հաստատվում է Ավանում: Այդ մասին ուղղակիորեն հայտնում է Հովհաննես Դրասխանակերտցին, իսկ Սեբեոսը հիշատակում է «երանելի ծերունի կաթուղիկոսն Յովհանին», որին թաղում են Ավանում՝ «յեկեղեցին», «զոր ինքն», այն է՝ նույն ինքն «երանելի ծերունի կաթուղիկոսն Յովհանն» էր կառուցել: Հարկ է նկատել նաև, որ Հովհան Բագարանցու կողմից Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածնի կառուցումը, Քաղկեդոնական Աթոռի կաթողիկոս լինելու հանգամանքը որևէ կերպ չեն անդրադառնում նրա մականվան վրա, ինչը բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանին: Ընդ որում՝ Հովհան Մայրագոմեցու հաղորդումը՝ «ոմն սիւնական», մատնանշում է, որ Հովհան Բագարանցին չի ունեցել եպիսկոպոսական կարգ, այլ եղել է սյունակյաց ճգնավոր [Սմբատյան Շ. 1972, 186] և, որպես այդպիսին, չէր կարող նախքան կաթողիկոսանալը գտնվել Ավանում:

գ. Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին Հովհան Բագարանցի հակաթոռ կաթողիկոսի կողմից կառուցվում է որպես Հայ քաղկեդոնադավան կաթողիկոսության աթոռանիստ: Այս կարգավիճակով եկեղեցու կառուցումը Ավանում հնարավոր է միայն 591 թվականից սկսած՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի երկրորդ բաժանման պայմաններում: Ավանի՝ Պարսից տիրապետության տակ գտնվելու ժամանակահատվածում նմանօրինակ ձեռնարկի իրագործումն անհնարին պետք է համարել Հայ եկեղեցու ընդգծված հակաքակեդոնական դիրքորոշման և քակեդոնադավանության տարածման դեմ անզիջում պայքար մղելու պատճառով:

դ. Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու թվագրման վերին շեմը, նկատի ունենալով նաև Ա. Երեմյանի կարևոր այն դիտարկումը, թե Ավանի տաճարը կարող էր կառուցվել նույն ժամկետում, ինչ Հռիփսիմեի տաճարը՝ շուրջ 7 տարում, նույնիսկ ավելի կարճ ժամանակում, ապա կառուցման ավարտի առավելագույն շեմը հնարավոր է դառնում համարել մոտավոր 597 թվականը:

Եզրակացություն: Այսպիսով՝ մատենագրական ու պատմական տվյալների համադրական վերլուծությունը թույլ է տալիս Ավանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին թվագրել VI դարավերջով՝ ընդունելով կառուցման մեկնարկի համար 591 թվականը, իսկ ավարտի՝ 597 թվականը: Ըստ այդմ՝ մեր կողմից բերված տվյալները գալիս են նաև համալրելու Թ. Թորամանյանի առաջադրած տեսակետն ու վերահիմնավորումներ կատարելու:

Գրականության ցանկ

Bart'ikyan H. 1962, «Narratio de rebus Armeniae». hunaren t'argmanut'yamb mez hasats mi hay-k'aghkedonakan skzbnaghbyur, «Banber Matenadarani», t'. 6, Yerevan, ej 457-470.

T'voramanyan T'. 2013, Nyut'er haykakan chartarapetut'yan patmut'yan, Ashkhatut'yunneri zhoghovatsu, Yer., YePH hrat., ej 864:

Kirakos Gandzakets'i 1961, Patmut'yun Hayots', ashkhatasirut'yamb, K.M. Ohanjanyani, Yer., HSSRR GA hratarakch'., ej 426.

Hovhannes Draskhanakertts'i 1996, Hayots' patmut'yun, ashkharhabar t'argm. yev tsanot'agr., G. B. T'umanyani, Yer., YePH hrat., ej 397.

Ghazaryan A. 2018, Avani tachari yerklezu tsatskagir ardzanagrut'yuny. me?k, t'e? yerku ardzanagrut'yun, «Akunk'» gitakan hodvatsneri zhoghovatsu, t'iv 3 (19), Yerevan, YePH hratarakch'., ej 63-73.

Ghafadaryan K. 1968, Patmahnagitakan ditoghut'yunner Avani tachari veraberyal (Yerevani himnadrman 2750-amyaki arrt'iv), «Patmabanasirakan handes», t'. 3 (42), Yerevan, HSSH GA «Gitut'yun» hrat., ej 76-90.

Ghafadaryan K. 1975, Yerevan. mijnadaryan hushardzannery yev vimakan ardzanagrut'yunnery, HSSH GA hratarakch'., Yerevan, ej 252.

Marut'yan T. 1976, Avani tachary yev haranman hushardzanner, Yerevan, «Hayastan» hrat., 204 ej:

Marut'yan T.1980, Avani tachari karruts'man zhamanaky, «Lraber hasarakakan gitut'yunneri», t'. 2, ej 69-76.

Yovhan Mayragomets'i 2005, Dawt'ay Mets Koghmants' yepiskoposi vasn patkerats' yev nkaragrut'eants', harts'uats i Yovhannay Mayragomets'woy, gitakan bnagiry, N. Pogharyani, «Matenagirk' Hayots'», D. ht., E. dar, Ant'ilias-Libanan, ej 355-357.

Samuel Anets'i 2014, Samueli k'ahanayi Anets'woy Hawak'munk' i grots' patmagrats' yaghags giwti zhamanakats' minch'ev i nerkays tsayrak'agh arareal, yarrajabanov, hamematut'eamb, yawyeluatsnerov yev tsanot'ut'iwnnerov Arshak Ter–Mik'eleani, Vagharshapat, S. Ejmiatsni tparan, 1892, ej 302.

Samuel Anets'i yev sharunakoghner 2014, Zhamanakagrut'yun, Adamits' minch'ev 1776 t'., ashkhatasirut'yamb, K. Mat'evosyani, Yer., «Nairi», ej 504.

Sebeos 2005, Patmut'yun, k'nnakan bnagiry, G. V. Abgaryani, arevelahayeren t'argm. yev tsanot'agr., G. K. Khach'atryani yev V. A. Yeghiazaryani, Yer., «ZANGAK-97» hrat, ej 404.

Smbatyan SH. 1972, Mi k'ani chshgrtumner Movses Kaghankatvats'u «Aghvanits' ashkharhi patmut'yan» bnagri mej, «Patmabanasirakan handes», t'. 2, 1972, ej 174-192.

Step'anos Orbelean 1910, Patmut'iwn nahangin Sisakan, Arareal Step'annosi Orbelean ark'episkoposi Siwneats', T'iflis, yelek'trasharzh tp. or. N. Aghaneants'i, ej 610.

Eremyan A. 1969, K voprosu o datirovke kafedral'noj cerkvi v Avane, «Lraber hasarakakan gitut'yunneri», t'. 3, Yerevan, HSSRR GA hrat., ej 47-62.

Tokarskiy N. 1961, Arkhitektura Armenii IV-XIV vv., Yerevan, «Armgosizdat», 388 str. + tablitsy 100 str.

Yakobson A. 1950, Ocherk istorii zodchestva Armenii V-XVII vv., pod obshch. red. N. M. Bachinskogo, Gos. izd-vo arkhitektury i gradostroitel'stva, Moskva-Leningrad, 103 s.

Bartikyan H. 1962, «Narratio de rebus Armeniae»: hunaren targmanutyamb mez hasats mi hay-qaghkedonakan skzbnaghbyur, "Banber Matenadarani", t. 6. (in Armenian)

Totamanyan T. 2013, Nyuter hajkakan chartarapetutyan, EPH hrat. (in Armenian)

Kirakos Gandzaketsi 1961, Patmutyun Hayots, ashkhatasirut. K. M. Ohanjanyani, HSSR GA hrat. (in Armenian)

Hovhannes Draskhanakertsi 1961, Hayots patmutyun, ashkharhab. targ. ev tsanotagr. G. B. Tumanyani, EPH hrat. (in Armenian)

Ghazaryan A. 2018, Avani tachari e8klezwu tsatskagir ardzanagreutyunĕ: mek?, te? Erku ardzanagrutyun, "Akunq", t. 3(19), EPH hrat. (in Armenian)

Ghafadaryan K. 1968, Patmahnagitakan ditoghutyunner Avani tachari veraberyal, "Patmabanasirakan hands", t. 3(42). (in Armenian)

Ghafadaryan K. 1975, Erevan: mijnadaryan hushardzannerĕ ev vimakan ardzanagrutyunnerĕ, HSSH GA hrat. (in Armenian)

Marutyan T. 1976, Avani tacharĕ ev haranman huhsardzannerĕ, Yerevan, "Hayastan" hrat. (in Armenian)

Marutyan T. 1980, Avani tachari karutsman zhamanakĕ, "Lraber hasarakakan gitutynneri", t. 2. (in Armenian)

Hovhan Mayragometsi 2005, Davta Mets Koghmants episkoposi vasn patkerats ev nkaragrutyants hartsvats i Hwvhanna Mayragometsvo, git. bnagirĕ N. Pogharyani, "Matenagirq Hayots", D h., E dar, Antilias-Libanan. (in Armenian)

Samuel Anetsi 2014, Samueli qahanayi Anetsvo Havaqmunq i grots patmagrats haghags gyuti zhamanakats minchev i nerkays tsayraqagh araryal, harajabanĕ Arshak Ter-Mikeleani, S. Echmiadzni tpar. (in Armenian)

Samuel Anetsi ev sharunakoghner 2014, Zhamanakagrutyn, Adamits minchev 1776 t., ashkhatas. K. Matevosyani, "Nairi" hrat. (in Armenian)

Sebeos 2005, Patmutyun, qnn. bnag. G. Abgaryani, targ. ev tsanotag. G. Khachatryani ev V. Eghiazaryani, "Zangak" hrat. (in Armenian)

Smbatyan Sh. 1972, Mi qani chshtumner Movses Kaghankatvatsu "Aghvanits ashkharhi patmutyan" bnagri mej, "Patma-banasirakan hands", t. 2. (in Armenian)

Stepanos Orbelean 1910, Patmutyun nahangin Sisakan, arareal Stepanosi Orbelean arqepiskoposi Syuneats, Tiflis, tp. N. Aghaneantsi. (in Armenian)

Jeremmyan A. 1669, K voprosu o datirovke kafedralnoj cerkvi v Avane, "Lraber hasarakakan gitutynneri", t. 3. (in Russian)

Tokarskij N. 1961, Arxitektura Armenii IV-XIV vv., "Armgosizdat". (in Russian)

Jakobson A. 1950, Ocherk istorii zodchestva Armenii V-XVII vv., Gos. izdat. (in Russian).